ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Р Е Ц Е Н З И И

С. М. САРЬЯН, *Советская армянская литература (1941—1960)*, Издательство АН Армянской ССР, 1964, 305 стр., цена 71 коп.

Ս. Մ. ՍԱՐՅԱՆ, *Սովետահայ գրականություն (1941—1960)*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1964 թ., 305 էջ, գինը 71 կոպ.

Վերջին տասնամյակում մեղանում, մասնավորապես Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, զգալի աշխատանք է կատարվել սովետահայ գրականության անցած ավելի քան բառասնամյա ուռու գիտական ուսումնասիրման բնագավառում. լույս են տեսել առանձին արժեքավոր մենագրություններ մի քանի ականավոր գրողների մասին, հրապարակի վրա է «Սովետահայ գրականության պատմության» առաջին ծավալուն հատորը, արդեն հրատարակության է պատրաստվել երկրորդ հատորը...

Սովետահայ գրականության պրոբլեմների քննարկմանը, նրա կուտակած փորձի գիտական ամփոփմանը իր կոլեգաների հետ միասին եռանդուն մասնակցություն էր ունենում նաև հանգուցյալ գրականագետ Սարգիս (Սարիկ) Սարյանը։ Այս ասպարեզում կատարած իր ուսումնասիրությունների առաջին արդյունքները հրատարակելուց հետո նա ձեռնամուխ եղավ Հայրենական մեծ պատերազմի շրջանի և հետպատերազմյան տարիների սովետահայ գրականության հետազոտությանը, նպատակ ունենալով հանդես գալ առանձին մի մենագրությամբ։ Վերջերս հետմահու լույս տեսավ Ս. Սարյանի «Սովետահայ գրականություն (1941—1960)» խորագրով գիրքը ռուսերեն, որ հրատարակել են Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտը և Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը։

Հայրենական մեծ պատերազմի շրջանը սովետահայ գրականության զարգացման կարևորագույն փուլերից մեկն է, որը հատկանշվում է ժամանակի պահանջներով պայմանավորված մի շարք էական առանձնահատկություններով։ Հայրենասիրության, հայրենիքի պաշտպանության, ազատագրական պայքարի մոտիվները դառնում են առաջատարն ու որոշիչը գրական բոլոր ժանրերում, առավել ցայտուն կերպով դրսևորվում գրականության սերտ կապը կյանքի, ժողովրդի մեծ ու հերոսական առօրյայի հետ։ Հենց այս տեսանկյունից էլ Ս. Սարյանը համառոտակի քննարկում է ինչպես ավագ, այնպես էլ միջին ու կրտսեր սերնդի գրողների ստեղծած գրական արժեքները։

Նշելով, որ պատերազմի տարիներին առանձնապես բուռն զարգացում և վերելք ապրեց սովետահայ բանաստեղծական արվեստը, հեղինակը ընդգծում է, որ համաժողովրդական սրբազործության ու հերոսականության գեղարվեստական հաստատման ձգտումը էպիկական լայն շունչ հաղորդեց քնարերգությանը, իսկ էպիկական կտավները հագեցրեց սրտառուչ քնարականությամբ. սովետահայ պոեզիայի լավագույն գործերում իր արտահայտությունը գտավ էպոսի և քնարերգության օրգանական միաձուլման պրոցեսը, որի ընթացքում ստեղծվեցին գրական մի շարք փայլուն արժեքներ։ Հեղինակը անդրադառնում է հայ պոեզիայի մեծ վարպետ Ավ. Իսահակյանի «Մարտակոչ», «Հայ ճարտարապետությունը» բանաստեղծություններին, Ն. Զարյանի «Զայն հայրենական», «Վաչեն», «Արզարանդի խնձորները» և պատերազմի շրջանում գրած այլ պոեմներին ու բանաստեղծություններին, քննարկում է Ե. Սարյանի, Հ. Շիրազի, Թ. Հուրյանի, Ռ. Բորյանի, Հ. Սահյանի, Ս. Կապուտիկյանի, Գ. Էմինի, Ս. Վահունու և սովետահայ մյուս պոետների այդ տարիների ստեղծագործությունները։

Անդրադառնալով սովետահայ արձակին, Ս. Սարյանը նշում է, որ նրա զարգացումը Հայրենական մեծ պատերազմի տարիներին ընթանում էր օրգանապես իրար հետ կապված և փոխադարձաբար միմյանցով պայմանավորված երկու հիմնական ուղղություններով. այդ արձակը, իր ամենատարբեր տեսակներով, մի կողմից՝ անմիջականորեն արտացոլում էր արդիականությունը՝ վերարտադրելով ռազմաճակատի ու թիկունքի հերոսական առօրյան, մյուս կողմից՝ դիմում էր պատմությանը, անցյալում օտարերկրյա գավթիչների դեմ ժողովրդի մղած հերոսական պայքարի դրվագներին, դրանք իմաստավորելով ու արժեքավորելով Հայրենա-

կան մեծ պատերազմի լույսի տակ և այդպիսով դարձյալ արտահայտելով ժամանակաշրջանի ոգին՝ այս դեպքում արդեն միջնորդավորված կերպով։ Այս հիմնական ստորաբաժանման համաձայն էլ հեղինակը համառոտակի քննարկում է սովետահայ մի շարք արձակագիրների գործերը (ակնարկ, նոթագրություն, պատմվածք, նովել), առանձնակի տեղ հատկացնելով Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» և Ստ. Զորյանի «Պապ թագավոր» նշանավոր ստեղծագործություններին, որոնք հանդիսացան սովետահայ պատմավեպի անկյունաքարերը։

«Սովետահայ գրականությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին» բաժնի վերջին հատվածը նվիրված է դրամատիկական ստեղծագործություններին։ Ինչպես մյուս ժանրերում, այնպես էլ դրամատուրգիայում կենտրոնականը հայրենիքի պաշտպանության թեման էր, մեր սարդկանց հերոսականության, նրանց կամքի ուժի, բարոյական-հոգեկան վսեմ հատկանիշների գեղարվեստական հաստատման խնդիրը։ Հեղինակը անուշադրության չի մատնում նաև սովետահայ դրամատուրգիայի մեջ տեղ գտած գեղարվեստական կարգի թերությունները։

Ս. Սարյանի գրքի մեծագույն մասը հատկացված է ետպատերազմյան տարիների սովետահայ գրականությանը (էջ 91—305)։ Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո, նշում է հեղինակը, գրականության առջև կանգնած ամենահրատապ և առաջնահերթ խնդիրներից մեկը սովետական ժողովուրդների պատմական հաղթանակի պատճառների գեղարվեստական բացահայտումն ու մարմնավորումն էր. մեր օրերի հերոսի բնավորության կազմավորման բարդ պրոցեսի վերարտադրությունը գրական ամենատարբեր ժանրերում։ Սակայն անհատի պաշտամունքը մեծապես խանգարում էր այս կենսական խնդրի հաջող իրականացմանը, հաճախ խաթարելով գրականության և արվեստի բնականոն զարգացումը։ ՍՄԿՊ XX համագումարը լայն հեռանկարներ բացեց նաև գրականության ու արվեստի նոր վերելքի համար։ «Սովետական արվեստն ու գրականությունը,—գրում է Ս. Սարյանը,—կանգնում են գեղարվեստական մտածողության՝ անհատի պաշտամունքի շրջանի համար բնորոշ երկատվածությունը վճռականորեն հաղթահարելու ուղու վրա, երկատվածություն, որ իր հետ բերում էր ճշմարտության ու գեղեցկի սինթեզին հասնելու ուղղությամբ կատարվող որոնումներին խոչընդոտող դատողականություն և մակերեսային նկարագրայնություն, որն ի վիճակի չէր թափանցելու կենսական երևույթների էության մեջ։

Սովետական ամբողջ գրականության, այդ թվում և նրա ջոկատներից մեկը հանդիսացող սովետահայ գրականության առաջատար տենդենցը դարձավ ժողովրդի դերի առավել խոր ըմբռնումը, մեծ հոգատարությունը մարդու նկատմամբ, գրական ստեղծագործության հերոսների հոգեկան աշխարհի բազմակողմանի վերլուծության խորացումը։ Անհամեմատ մեծացավ գրականության հասարակական հնչեղությունը։ Մեր գրականությունն ու արվեստը հասան գաղափարական-գեղարվեստական նշանակալից նվաճումների։ Առանձնապես բուռն զարգացում ապրեց սովետահայ արձակը։ Ցույց տալով մի շարք գրողների ստեղծագործության մեջ տեղ գտած էական թերությունները, հեղինակն ընդգծում է սովետահայ արձակի ձեռքբերած նվաճումները։ Պարտիայի XX համագումարից հետո, ընդհանրացնում է նա, ժամանակակից թեմատիկան դառնում է մեր արձակի հիմնական բովանդակությունը, հետզհետե հաղթահարվում են սխեմատիզմը, տեխնիցիզմը, մտացածին կոնֆլիկտները։ Զարդացման նոր աստիճանի է բարձրանում սովետահայ պատմվածքը, ասպարեզ են իջնում մի շարք շնորհալի երիտասարդ գրողներ։

Ետպատերազմյան սովետահայ արձակը Ս. Սարյանը քննության է առնում ըստ թեմատիկայի. սոցիալիստական գյուղի պատկերումը (Ն. Զարյանի «Հացավան»-ը, Ս. Խանզադյանի «Հողը», Ա. Սեկոյանի «Ոսկե վազերի մեջ»-ը, Քր. Թափալցյանի «Ոսկե հովիտ»-ը և այլն), Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանի արտացոլումը (Հր. Քոչարի «Մեծ տան զավակները», Ս. Խանզադյանի «Մեր գնդի մարդիկ», Մ. Արմենի «Յասվա»-ն, Քր. Թափալցյանի «Պատերազմ»-ը, Սիրասի «Արարատ»-ը, Բ. Հովսեփյանի «Սերմնացանները չվերադարձան» վիպակը և այլն), արդյունաբերության և սոցիալիստական քաղաքի նկարագիրը (Վ. Խեչումյանի «Մեզ մոտ, հարավում», Ա. Ստեփանյանի «Ամառնամուտ», Բ. Վերդյանի «Ինչպե՞ս է գալիս երջանկությունը» և այլ վեպեր)։ Հեղինակը անդրադառնում է նաև արևելյան երկրների ազգային-ազատագրական շարժումների և հայրենադարձության թեմաների գեղարվեստական մշակմանը, սովետահայ պատմվածքին ու նովելին, խոսում պատմական թեմատիկայի գեղարվեստական մշակման մասին։

Գրքում զգալի տեղ է նվիրված ետպատերազմյան շրջանի սովետահայ պոեզիայի քննարկմանը։ Այս տարիներին պոեզիան ևս ապրում է զարգացման ու հասունացման ուշագրավ պրոցես։ Սկզբնական շրջանում ակնհայտորեն դրսևորվող ներբողական ոճը, ինչպես նաև ան-

կոնֆլիկտայնությունն ու սխեմատիզմը՝ պոեմի ժանրում, աստիճանարար հաղթահարվում են. ավելի ու ավելի է խորանում պոեզիայի հոգեբանական-խոհական բովանդակությունը։ «Ի-հարկե,— գրում է հեղինակը,— ետպատերազմյան առաջին տարիներին, ի հակադրություն պարադային ներբողների, ստեղծվեցին նաև խոր մարդկայնությամբ հագեցված բանաստեղծություններ, որոնց մեջ արտահայտվում են հայ ժողովրդի զգացմունքները ու խոհերը։ Գրականության զարգացման պրոցեսը տեղի էր ունենում հակադիր տենդենցների ներքին պայքարի ձևով։ Այն ամենը, ինչ առողջ էր, կենսական ու ճշմարտացի, պոեզիայի մեջ զարգացման նոր հորիզոններ ձեռք բերեց 1953—1956 թթ. հետո, երբ պոեզիայի գերիշխող հատկանիշները դարձան բնաբերգության ակտիվացումը, ինտելեկտուալ մակարդակի բարձրացումը, հուզական կողմի հարստացումը։ Պոեզիայի նոր ծաղկումը նախապատրաստվում էր նաև ետպատերազմյան առաջին շրջանում ստեղծված լավագույն բանաստեղծություններով»։ Այս գլխում հեղինակը կանգ է առնում Ն. Զարյանի, Գ. Սարյանի, Հ. Շիրազի, Հ. Սահյանի, Գ. Էմինի, Ս. Կապուտիկյանի, Պ. Սևակի, Մ. Մարգարյանի, Հր. Հովհաննիսյանի և սովետահայ մյուս պոետների ստեղծագործության վրա, ցույց տալով նրանց էվոլյուցիայի մի քանի կողմերն ու յուրահատկությունները։

Գրքի վերջում հեղինակը համառոտակի խոսում է ետպատերազմյան տարիների սովետահայ դրամատուրգիայի մասին, նշելով այս ասպարեզում ձեռք բերված հաջողությունները, ինչպես նաև ընդհանուր բնույթի մի քանի թերություններ, որոնց ստեղծագործական հաղթահարումը այդ ժանրի հետագա զարգացման, խորացման ու կատարելագործման կարևոր գրավականներից մեկն է։

«Սովետահայ գրականություն (1941—1960)» գիրքը Ս. Սարյանի մոտ տասը տարվա աշխատանքի արդյունքն է, որը վաղամեռիկ գրականագետի վերջին խոսքը եղավ։

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Проблемы современной Турции. Издательство Восточной литературы, М., 1963, 219 стр., цена 70 коп.

Ժամանակակից Թուրքիայի պրոբլեմները. Արևելյան գրականության հրատարակչություն, Մոսկվա, 1963, 219 էջ, գինը 70 կոպ.

Արևելյան գրականության հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց «Ժամանակակից Թուրքիայի պրոբլեմները» խորագրով ժողովածուն, որտեղ զետեղված հոդվածները բնդգրկում են ներկայիս Թուրքիայի ներքին կյանքի գրեթե բոլոր բնագավառները։ Գիրքն արժեքավոր է նրանով, որ հեղինակները փաստական նոր նյութի հիման վրա լուսաբանում են գերազանցապես վերջին շրջանի իրադարձությունները՝ 1960 թ. պետական հեղաշրջումը, 1961 թ. սահմանադրության ընդունումը, Թուրքական նոր կառավարության քաղաքականությունը հոդային, բանվորական, ազգային հարցերում և այլն։

Հետաքրքրական է Ա. Գ. Բազիյանցի հոդվածը, որը նվիրված է 1960 թ. մայիսի 27-ին Թուրքիայում տեղի ունեցած պետական հեղաշրջման պատճառների քննությանը։ Հեղինակը փաստերով ցույց է տալիս, որ այդ հեղաշրջումը հետևանք էր երկար տարիների ընթացքում երկրում առկա տնտեսական ու քաղաքական ճգնաժամի, որն իր հերթին սրվում ու խորանում էր ռազմամոլ շրջանների կողմից տարվող քաղաքականությամբ։ Թուրքիան խաղաղ պայմաններում կես միլիոնանոց զորք է պահում (ՆԱՏՕ-ի բանակների մեջ երրորդը՝ ԱՄՆ-ից ու Ֆրանսիայից հետո), ամենագործուն մասնակցություն ունենում ագրեսիվ ռազմական խմբավորումներում։ Բայար-Մենդերեսի կլիկի 10-ամյա տիրապետության հետևանքով Թուրքիան ֆինանսական ճգնաժամի եզրին էր կանգնած։ Դեմոկրատական գուսակցության գլխավորած կառավարությունը, նշում է հեղինակը, չկարողացավ լուծել ներքին տնտեսական ու քաղաքական և ոչ մի պրոբլեմ, ինչպես և արտաքին քաղաքականության բնագավառում ժառանգած խրեզիրները։ Ուստի և զինվորականությունը որոշեց պետական հեղաշրջման միջոցով իշխանությունից հեռացնել անանկացած «ազատագրիչներին՝ սոցիալական բախումներն ու քաղաքացիական պատերազմը երկրում կանխելու համար։ Միանգամայն հիմնավորված պետք է համարել հեղինակի այն եզրակացությունը, թե գոյություն ունեցող սոցիալական կարգերն ու պրոիմպերիալիստական կողմնորոշումը անասան թողնելու ձգտումն էր, որ միավորեց հե-